ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 17 նոյեմբերի 2026 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Դիլանյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով Պատվական Հայրապետյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Պատվական Հայրապետյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Զարուհի Վարդանյան, Արմեն Ղազարյան, Ռուբեն Բալոյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 28-ին, որով Դիմողը խնդրել է.

«(...)

(...) Լուծել թիվ ՀԿԴ/0035/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից 21.06.2026 թ. որոշմամբ կիրառված

ՀՀ քաղ. դատ. օր-ի 61-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածին համապատասխանության հարցը»:*

2. Ներկայացնելով թիվ ԵԿԴ/0050/01/16 քրեական և թիվ ՀԿԴ/0035/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի դատավարական նախապատմություն-ները՝ Դիմողը նշում է, որ խնդրո առարկա հակակոռուպցիոն քաղաքացիական գործի շրջանակներում Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ Հակակոռուպցիոն դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու հարցում վճռորոշ նշանակություն է ունեցել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող դրույթով ինչպես դատական ակտերի, այնպես էլ դրանցով հաստատված արարքների շրջանակը լայն է և անորոշ: Մասնավորապես՝ Դիմողը գտնում է, որ տվյալ դրույթով սահմանված՝ «հաստատված որոշակի արարք» ձևակերպումը ներառում է ոչ միայն անձի կողմից հանցանք կատարելը՝ Սահմանադրության 66-րդ հոդվածի իմաստով, այլ նաև ցանկացած գործողություն, որը հաստատվել է ցանկացած դատական ակտով: Այսինքն՝ Դիմողի պնդմամբ՝ նշված ձևակերպումն իրավակիրառ մարմիններին թույլ է տալիս շրջանցել Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված պահանջը, մասնավորապես, ստացվում է, որ այն պարագայում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, անձին վերագրված արարքը հանցանք է, իսկ նման դատավճռի բացակայության պարագայում նույն մեղադրանքում նկարագրված արարքը կարող է դիտվել որպես «որոշակի արարք» և ստանալ հաստատվածի ուժ: Մինչդեռ, ըստ Դիմողի՝ այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքին, տվյալ արարքը կոչվում է «հանցանք», այլ ոչ թե «որոշակի արարք», հետևաբար՝ այն կարող է հաստատվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Դիմողի պնդմամբ՝ «(...) վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, կիրառելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 61-րդ հոդվածը, նախադատելի նշանակություն է տվել թիվ

---

* Հարկ է նշել, որ Դիմողն իր անհատական դիմումի խնդրամասում չի վկայակոչել, սակայն դիմումի հիմնավորումներում անդրադարձել է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության նաև 63-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին համապատասխանության հարցին:

ԵԿԴ/0050/01/16 քրեական գործով կայացված դատական ակտերին՝ հաստատված համարելով Պատվական Հայրապետյանին վերագրված արարքի փաստական հանգամանքները, այն դեպքում, երբ վերջինիս նկատմամբ մեղադրական դատավճիռ գոյություն չունի, այն է վերաքննիչ դատարանի որոշմամբ առաջին ատյանի դատարանի կայացված դատական ակտը բեկանվել է, իսկ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով»:

Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման պայմաններում վերջինիս առաջադրված մեղադրանքում շարադրված փաստական հանգամանքները դիտարկվել են որպես ապացուցման կարիք չունեցող փաստեր, ինչը հակասում է սահմանադրական կարգավորմանը և հանգեցնում իր հիմնարար իրավունքի խախտման: Նման պայմաններում Դիմողը գտնում է, որ սույն դիմումի շրջանակներում անհրաժեշտ է պատասխանել իրավական հարցադրմանն առ այն, թե ի՞նչ սահմաններում կարող է քրեական գործով կայացված դատական ակտը նախադատելի նշանակություն ունենալ քաղաքացիական գործի համար այն պարագայում, երբ քրեական գործով անձի մեղավորությունը չի հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ըստ Դիմողի՝ անմեղության կանխավարկածի երաշխիքը կարող է խախտվել նաև քրեական վարույթի ավարտից հետո. մասնավորապես, այն դեպքում, երբ այլ դատավարության շրջանակներում կայացված դատական ակտով՝ նախադատելիության ինստիտուտի կիրառմամբ, անձին նախկինում առաջադրված քրեական մեղադրանքի առարկան կազմող արարքը, ինչպես նաև դրա հիմքում ընկած փաստական հանգամանքները դիտարկվում են որպես տվյալ անձի կողմից կատարված և այլևս ապացուցման կարիք չունեցող:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդրի կողմից սահմանված՝ «որոշակի արարքներ» ձևակերպումը չի պարունակում բավարար հստակ չափանիշներ՝ որոշելու, թե քրեական վարույթով կայացված դատական ակտերով հաստատված ո՞ր հանգամանքները կարող են այլ դատավարության շրջանակներում

ունենալ նախադատելի նշանակություն, և ո՞ր հանգամանքները չեն կարող ունենալ այդպիսի նշանակություն, քանի որ դրանց հաստատումը ենթադրում է անձի մեղավորության վերաբերյալ եզրահանգման առկայություն: Դիմողը գտնում է, որ այս առումով առկա է իրավական որոշակիության խնդիր, որը դրսևորվում է ոչ միայն վիճարկվող դրույթով սահմանված՝ խնդրո առարկա ձևակերպման լեզվական անորոշությամբ, այլ նաև այն հանգամանքով, որ տվյալ դրույթով չի բացառվում իրավակիրառ պրակտիկայում անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքն ուղղակիորեն շրջանցող մեկնաբանությունը:

Դիմողը նաև նշում է, որ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառմամբ խախտվել է իր՝ Սահմանադրության 66-րդ հոդվածով երաշխավորված հիմնարար իրավունքը, ինչպես նաև քննարկվող խնդիրն ուղղակիորեն փոխկապակցված է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի հետ, քանի որ սույն խնդիրը վերաբերում է ոչ միայն անմեղության կանխավարկածին, այլ նաև դատավարական արդարության և իրավական կանխատեսելիության պահանջներին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով թիվ ՀԿԴ/0035/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, **սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և*

ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ դրույթը ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) ***երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,***

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե* ***դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:***

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում,* ***երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(…) «Սահմանադրական դատարանի*

մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված ***որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:***

Սահմանադրական դատարանը նույն աշխատակարգային որոշմամբ արտահայտել է նաև իրավական դիրքորոշում առ այն, որ *«(…) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավազորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում: (…) Սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավազորությամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում»:*

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ **ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է (առկա է եղել) որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա վերջինս չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:** Այս իրավական պահանջի նպատակն այն է, որ կոնկրետ անձի հիմնական իրավունքներին վերաբերող հարցին բոլոր իրավասու դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում անդրադառնան, որից հետո միայն Սահմանադրական դատարանը, ունենալով նաև տվյալ հարցի վերաբերյալ իրավասու բոլոր դատական ատյանների կողմից ձևավորված

իրավակիրառ պրակտիկայում կիրառված նորմերի մեկնաբանությունները, անհատական դիմումի շրջանակներում անդրադառնա այդ հարցին և գտնի պարտադիր լուծումներ հանրային իշխանության բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց համար:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հանգում է հետևյալ եզրակացության.

սույն անհատական դիմումի, կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև թիվ ՀԿԴ/0035/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ **Դիմողը չի իրացրել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջը:** Մասնավորապես՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով խնդրո առարկա հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում հետևյալը.

Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հունվարի 21-ին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ *«(…) առկա է անհրաժեշտություն պատասխանողի ոչ իրավաչափ գործողությունների և պետությանը պատճառված վնասի /այդ թվում դրա չափի/ միջև պատճառահետևանքային կապի, պատասխանողի մեղքի պարզման մասով նոր քննություն իրականացնել, որի ընթացքում պետք է իրենց համակցության մեջ հետազոտման և գնահատման առարկա դարձվեն գործով ներկայացված բոլոր ապացույցները, որից հետո միայն Դատարանը կարող է պատճառաբանված եզրահանգում կատարել վնասի հատուցման համար պարտադիր բոլոր վավերապայմանների միաժամանակյա առկայության, ըստ այդմ՝ հայցը ամբողջությամբ կամ մասնակի բավարարման կամ մերժման ենթակա լինելու վերաբերյալ /նոր քննության ծավալ/»*:

Արդյունքում՝ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը որոշել է. *«(…) ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը բավարարել.*

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0035/02/23 քաղաքացիական գործով 26.05.2025 թվականին կայացված ***վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության****»* (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմի):

Այնուհետև՝ Դիմողի՝ Պատվական Հայրապետյանի կողմից վերոգրյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի կապակցությամբ **Վճռաբեկ դատարանը 2026 թվականի մայիսի 26-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:**

Այսպիսով, վերոշարադրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 26-ի վճիռը բեկանվելու և գործը նույն դատարան՝ տվյալ որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության ուղարկվելու պայմաններում, ստացվում է, որ **տվյալ գործը գտնվում է նոր քննության փուլում:**

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում փաստել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով խնդրո առարկա հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում նաև, որ Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հունիսի 8-ին կայացված՝ «Հակակոռուպցիոն քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» որոշմամբ որոշել է. «*Թիվ ՀԿԴ/0035/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ Պատվական Սեյրանի Հայրապետյանի՝ պետությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պահանջի մասին* ***ընդունել վարույթ, նշանակել նախնական դատական նիստ 2026 թվականի հուլիսի 07-ին****, ժամը 15:00-ին Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (...)»* (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմի):

Վերը նշված՝ 2026 թվականի հուլիսի 7-ին նշանակված նախնական դատական նիստը կայացել է, իսկ **հերթական նախնական դատական նիստը նշանակված է 2026**

թվականի նոյեմբերի 18-ին՝ համաձայն «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության:

Այսպիսով, **սույն հակակոռուպցիոն քաղաքացիական գործը դեռևս գտնվում է նոր քննության, մասնավորապես, նախնական դատալսումների փուլում:**

Վերոշարադրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-120 աշխատակարգային որոշմամբ ընդգծել է, որ՝ « (...) *սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող: Նշված կարգավորումները միտված են դիմողի կողմից նախքան Սահմանադրական դատարան դիմելու իրավունքն իրացնելն իր ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման համար օրենսդրությամբ* ***նախատեսված բոլոր հնարավորությունները սպառելուն»:***

Վերոշարադրյալի լույսի ներքո, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ **Դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,** հետևաբար՝ սույն պարագայում բացակայում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան պայմանը: Այսինքն՝ **Դիմողը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ **Դիմողի՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու, Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չլինելու հիմքերով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Պատվական Հայրապետյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահո Ա. Դիլանյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

17 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԴԿՈ-101